

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գյումրու քաղաքապետարանը հայտարարում է, որ 2015թվականի հուլիսի 14 –ին տեղի կունենա ներքաղաքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության հերթական մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների համար:

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ					
	Անվանումը և համարը	Մկզբնակետը, /երթակարգավարական կետ/	Վերջնակետը /երթակարգավարական կետ/	Տեսակը Միկրոավտոբուսային, /ավտոբուսային/	Մպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը /ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը/	Մրցույթի անցկացման օրերը
1.	թիվ 9	փողոց Կոշտոյան	Ե/Գ Բանավան	ավտոբուս	5	14.07.2015թ.
2.	թիվ 10	Նախկին ավտոբուսային պարկ	Հաղթանակի պողոտա	ավտոբուս	5	14.07.2015թ.
3.	թիվ 18	Հաղթանակի պողոտա	փողոց Ե. Չարենց	միկրոավտոբուս	12	14.07.2015թ.
4.	թիվ 28	փողոց Տ. Ճարտարապետի	փողոց Տ. Ճարտարապետի	միկրոավտոբուս	14	14.07.2015թ.
5.	թիվ 33	Մուշ-1 թաղ.	Սևերսկի թաղամաս	միկրոավտոբուս	10	14.07.2015թ.
6.	թիվ 50	Օղանավակայան	Մուշ-2 թաղամաս	միկրոավտոբուս	10	14.07.2015թ.

Հայտերը կազմակերպությունների կողմից կարող են ներկայացվել Գյումրու քաղաքապետարան (ք.Գյումրի, Վարդանանց 1) մրցույթային հանձնաժողովին 2015թ. մայիսի 12-ից բոլոր աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից մինչև 18:00-ն՝ 2015թ. 07-ը հուլիսի ներառյալ:

Մրցույթը կանցկացվի՝ նախկին /ՕՐՄ/ -ի տարածքում հասցեն՝ Ղանդիլյան 3/ա ժամը 11:00-ին: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել մրցութային հանձնաժողովին, հեռ. 0312 –2-22-30:

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման պահանջների համաձայն:

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՑԹԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՏԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
2. Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
5. Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
6. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
7. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինակառությունը հաստատող փաստաթուղթ.
8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինակառությունը հաստատող փաստաթուղթ.
9. Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական գնման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում.
10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակալանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական գնումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
11. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստանձնված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ ստանձնված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչպիսիք հավաստվում է դրանց իսկությունը: